

Հավիթյունն արա՛ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

# ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS հունվար 2017, № 1 (34) БАРЕГОРТС

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱԴԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԳԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## Դ Ր Ա Մ Ա Հ Ա Վ Ա Ք - 2016



Մի դրվագ «Միփան» սրահում կայացած ավանդական դրամահավաքից, որը միշտ էլ ընթանում է ջերմ մթնոլորտում

Դրամահավաքը կամ հանգանակությունն առհասարակ դժվարին բան է, բայց հաճելի է դառնում, երբ ունենում է համազգային բարեգործական ազնիվ ու վեհ նպատակներ, երբ գիտես, որ այն նպաստելու է վերաշինվող հայրենիքի բարգավաճմանն ու մեր հայրե-

նակիցների բարեկեցությանը: Իր արդյունավետ գործունեությամբ՝ ստեղծման ժամանակներից ի վեր այս նպատակներին է ծառայել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Առանց նրա եռանդուն գործունեության անկարելի

պիտի լինեն ոչ միայն Քաշաթաղի կարիքավոր բազմազավակ ընտանիքներին տարատեսակ օգնության տրամադրումը, այլև բազմաթիվ բարեգործական ծրագրերի կենսագործումը:

Հիմնադրամի գործադիր տնօրենի և հոգաբարձության խորհրդի ջանքերի և բարեգործ նվիրատուների կամավոր ներդրումների շնորհիվ այսօր իրականացվում են մի շարք ազգօգուտ գործեր:

Դրամահավաքի գլխավոր կենտրոնն այսօր ԱՄՆ-ի հայաշատ Լոս Անջելեսն է, ուր բնակվող մեր հայրենակիցներն այդ օրը յուրատեսակ ազգային տոն են համարում, ներկայանում են խանդավառությամբ և դրսևորում հայրենիքի և հայրենակիցների հանդեպ պարտքի բարձր գիտակցություն և իրենց նյութական հնարավորությունները սիրով տրամադրում Քաշաթաղի կարիքավորներին օգնելու և բարեգործական ու գիտամշակութային տարբեր ծրագրեր կենսագործելու նպատակին և վստահ են, որ ամեն ինչ արվում է փոխադարձ վստահությամբ:


«Սիփան» սրահում կազմակերպված ամենամյա ճաշկերույթ - դրամահավաքը, որն այս անգամ առավել ներկայացուցչական ու արդյունավետ էր, Լոս Անջելեսում կայացավ 2016 թ. նոյեմբերի 13-ին հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի և հոգաբարձության խորհրդի անդամ, «Բարեգործ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր պրոֆ. Սամվել Մուրադյանի մասնակցությամբ:

Միջոցառումն ուղեկցվում էր գեղարվեստական ճոխ հայտագրով, մեր միացյալ Հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը խորհրդանշող զարդերի ու տարատեսակ իրերի վաճառքով ու արցախյան գորգի վիճակահանությամբ: Ողջ երեկոյի ընթացքում հնչում էին երգ - երաժշտությունը, քաջալերող խոսքն ու հայերեն ինքնաբույս ասմունքը, երկվորյակ քույրեր Անի և Լիլիթ

Սարաֆյանների, ինչպես նաև հանրածանոթ Արտաշես Ավետյանի սրտաբույս երգերը, որոնցով այդ սրահում ստեղծվել էր հայաշունչ ու հայաոգի մի փոքրիկ իրական Հայաստան, ուր հորդում էին փոխադարձ սերը, ծիծաղն ու խնդությունը:

Հանդիսավար Թագուհի Արզումանյանը երեկույթն անցկացրեց ճաշակով և հմտությամբ: Ջերմ մթնոլորտում մարդկանց միավորել էր ազգային համախմբման գաղափարը և դժվարություններ հաղթահարող իրենց հայրենակիցներին ըստ կարելվույն սատարելու անկեղծ ձգտումը:

Նվիրատուները, որոնց անունները հրապարակվում են ստորև, կամավոր ներդրեցին իրենց բաժինը մեր երկրի բարեշինության ու մեր ժողովրդի հայրենապահպանության գործում և արժանի են համաժողովրդական օրհնանքի ու շնորհակալության:



Դրամահավաքի մասնակից, մեր գեղեցիկ գործին զինվորագրված Գայանե Ոսկանյանի բաղձանքը

ԴՐ ԱՄՍԱՀ ԱՎԱՔ		FUNDRAISING	
«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ» ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 13 ՆՈՅ ԵՄԲԵՐԻ 2016		"Gurgen Melikyan" Multichildren Family Foundation of Kashatagh Los Angeles, November 13, 2016	
Last Name	First Name	Amount in USD	Comments
Abedi	Seroj	100	
Aboolian	Karine & Saro	600	gift \$100
Aghbashian	Hambersom, Anahed Dekran	100	book program

Aleksandryan	Irina	320	
American Heating Technology		500	
Amirian	Robert	1100	gift \$600
Ararat Foundation		700	
Ararat Foundation		1000	
ARPA dental laboratory		300	
Arezouyan	Hratch	100	
Arzoumanian	Tagoui	150	
Arakel	George	30	gift
Aref	Tsaghkush & Johnie	200	
Asherie	Ruben	240	
Atelier de Paris		100	
Avagyan	Gayane	35	gift
Avanessian	Nora & Harmik	700	cow project
Avanessian	Nora & Harmik	100	
Badalyan	Sooren	260	gift \$10
Badalyan	Sarkis	200	
Baghdanian	Hamo & Medick	100	
Baghdanian	Ariknaz & Avydis	200	
Baghramyan	Varujhan	400	
Bakhshyan	Ludwig & Alice	350	
Balian	Harout Raffi	750	
Balian	Harout Raffi	1000	
Balian	Misak	150	
Bandari	Alvard & Vahik	200	
Baronikian	Felix & Lilit	100	
Bashmakian	Hagop & Alissa	210	gift \$10
Bateman	Dixie	30	
Bronozian	Harout	200	
Charchian	David	1000	
Charchian	Arthur	500	
Cohen Harutyunyan	Rosemary	300	book program
Cohen Harutyunyan	Rosemary	100	
Davtyan	Aghasi	700	cow project
Eskandar	Alenoosh	200	
For a better life	Mesropian Seroj & Medik	300	
Galstanian	Rafik	500	
Galstanyan	Galust	300	
Ghapgharan	Swetlana & Karine	50	
Gharakhanian	Haik & Clar	170	
Glendale West Drug Co INC		300	

Ghevondian	Masis	3000	
Gregory	Victor	500	
Gourjian	Roubin & Zaghik	250	
Guledjian	Tigran	700	
G.Z. anonymous		100	
Haghnazarian	Fred	110	gift \$10
Haghnazarian	Klar & Fred	150	
Halabi	Gabriel	200	
Halabi	Gilbert	1000	
Haroutunian	Harry & Bella	100	
Hayrapetian	Armen & Eleanora	1010	gift \$10
Haytayan	Leon	500	
Hovsepien	Dickran & Eugenie	100	
Information Integration Group, INC	Alec & Alenoosh	1000	
Jangozian	Vartan	200	gift
Kahve	Tony S.	1 000	
Kalognomos	Medea & Alexander	500	
Kanian	Nick & Mary	2000	
Kazanjian	Vahe & Seda	200	
Kazarians	Ardashes & Gayane	150	
Khanlarian	Vigen	200	
Kojaian	Minas & Nazelie	200	
Krkhyan	Akop	200	
Kusherian	Katia	100	
Kusherian	Vardui	100	
Kyureghian	Varujh & Emma	2000	
Little Mermaid Smokehouse		900	
Lusparyan	Oganes	200	
Maleky	Norik & Zarik	1050	gift \$50
Maloyan	Levon	200	
Marashlian	Levon	200	
Mardirossian	Timmy & Sedik	1500	gift \$500
The Mardoyan Family Trust	Alfred & Vanuhi	150	
Markarian	Valentine & Rooben	500	
Martin	Rosie	265	gift
Melikyan	Gurgen	6025	Lottery tickets
Mkhitaryan	Susanna	20	gift
Mkrtchian	Hacob	100	
Mokhtarian	Ohannes & Vanoosh	1400	cow project
Mokhtarian	Ohannes & Vanoosh	100	
Nalbandian	Hovsep & Caroline	100	
Nersissian	Edward & Karine	200	

Oganesian	Natalie	20	gift
Ovanessian	Arkady & Irene	1000	
Petrossian	Grigor	250	
Pezeshkian Sarkissian	Sooren & Jacqueline	125	
Pilossyan	Vagharshak	1610	gift \$110
Pilossyan	Vagharshak	60	
Pirjanian	Souren	500	
Pogarian	Asbed & Aida	150	
Samuelian	David	50	
Sarafyan	Morris	50	book program
Sargsyan	Andranik	50	
Sarkissian	Anush	100	
Sarkissian	Eva Loutfic	1 000	tree project
Shahbazian	Karnik	500	
Shahnazari	Saro & Mikayel	1000	
Signographics 2000, INC		200	
Sunday Tennis Group		290	
Tchobanian Khatchadourian Tchobanian	Aram & Aida	1 000	
Ter Abrahamian	Astghik	100	
Ter Petrossyan	Christine	80	
The Vahagn Setian Charitable Foundation		500	
Torosian	Vardkes	20	gift
Torossian	Vatkez	150	
Torosian	Romik & Ailin	250	
Tovmasyan	Ashken	100	
Tovmasyan	Ashken	30	gift
Tumanyan	Nerses	1 000	
Vahagn Club		140	
Vartanian	Olga & Sooren	100	
Vartanian	Henrick	40	
Vartanian	Bobgin	700	cow project
Vartanian	Raymond	70	gift
VJ & Associates		1 000	
Voskanyan	Gayane	120	gift \$20
Yegiyants	Artoush & Hasmik	250	
Yegiyants	George & Matilda	250	
Yegiyants	Suren	100	
Zargaryan	Amaraz	10	gift
Zargaryan	Vigen	1 100	
<b>TOTAL</b>		<b>\$ 57,490.00</b>	

## ՎԱՐԴԱՆ ՍՏ ԵՓԱՆՅ ԱՆ (ԴՌԻՇՄԱՆ ՎԱՐԴԱՆ) – 50

Երջանկահիշատակ Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» հանրահայտ վիպասքում արդարացիորեն փառաբանելով իրենց սխրանքներով անմահացած ֆիդայի ազատամարտիկների առաջին հերոսական սերնդին ու նրանց լեգենդացած առաջնորդներ Արաբոյին, Աղբյուր Սերոբին, Գևորգ Չաուշին, Դժոխք Յրայրին, Անդրանիկին, Դերսիմցի Քեռուն, Արծիվ Պետոյին ու Դրոյին, Սպաղանաց Մակարին, Սմբատ- Մախլոտոյին և թուրքական բռնատիրության հայաջինջ քաղաքականության դեմ հանուն հայության փրկության մարտնչած մյուս հերոսներին, մի հարցում կարծես վրիպել էր՝ գրելով, թե այդպիսի սերունդ եկավ ու անցավ, այդպիսի սերունդ դժվար թե մեկ էլ ծնվի:

Սիբիրյան աքտորավայրերի դառնությունները ճաշակած, մի քիչ վախվորած և հույսին այլևս չապավինող գրողն ինքը կուզենար սխալված լինել, որովհետև այդպիսի սերնդի լույս աշխարհ գալը հենց ինքն էր երազում: Եկավ այդ սերունդը՝ որպես հայոց արդարատենչ ու ազատաբաղձ ոգու նոր դրսևորում, եկավ որպես Սարդարապատում, Ապարանում ու Ղարաքիլիսայում և Յայրենական պատերազմում հերոսացած նախնիների նոր շարունակություն, և Արցախյան ազատամարտն սկսեց նոր պանծալի անուններով՝ Մոնթե Մելքոնյան ու Թաթուլ Կրպեյան, Լեոնիդ Ազգալոյան ու Դուշման Վարդան, Բեկոր Աշոտ ու Կարոտ...

Գրագետ հերոսների սերունդ էր սա՝ համալսարանական կամ այլ կրթությամբ, հայոց պատմության ու մշակույթի քաջ իմացությամբ, հայրենիքը արժևորելու բարձրագույն գիտակցությամբ ու թշնամու ոտնձգություններից անգամ կյանքի գնով պաշտպանելու վճռականությամբ:

Հաճախ են մեր բանաստեղծները երգը համեմատել զենքի հետ: Պ. Սևակն, օրինակ, իր ժամանակին այսպիսի դժգոհություն էր հղում և ուներ ու այսպիսի երազանք.

*Իսկ թե երգը մինչև անգամ զենք է դառնում,  
Ո՞ր է ձեռքը, որ ինքնակամ զենք է բռնում...*

Նա իր բանաստեղծական բաղձանքը 1960 թ. հարկադրված էր թաքցնել «Մարդը ափի մեջ» գրքի «Մատնիչ ցանկություն» բանաստեղծության տողերի խորքում. ուզում էր լինել խորունկ հանքահորերում խիստ անհրաժեշտ օդափոխություն, որի բացակայությունից հանքափորները պարզապես կխեղդվեն, լինել գերհզոր թևեր՝ սիրամարգերին, որ վեր սավառնեն և իրենց գեղեցկությունը տեսանելի դարձնեն ամենքին ու ամենուր, բայց գլխավորը՝ հայ բանաստեղծի գաղտնագրված նվիրական ցանկությունն այն անհրաժեշտությունն էր՝

*Դառնամ շքանշանի գունեղ ժապավեն՝  
Իմ հողը փրկող հերոսի կրծքին...*

Սա այժմ էլ համաժողովրդական ցանկություն է:

Այս սերնդի հայրորդիները բերեցին իրենց «զենք բռնող» ու թշնամուն պատժող ձեռքերը: Կամավոր ու գիտակից այդ հայրենասերների ուսուցիչը հայոց ողբերգական ու հերոսական պատմությունն էր ու գրականությունը, նրանց ուղենիշը Խորենացու, Աբովյանի, Նալբանդյանի, Պատկանյանի, Պեշիկթաշյանի, Րաֆֆու, Իսահակյանի, Սիամանյոյի, Վարուժանի, Չարենցի, Շիրազի ու Սևակի կարգախոսներն էին, նրանց ոգին սնվել էր սրբազան վրեժի կաթով, մեր ռազմի երգերով և հեռու ու մոտիկ քաջարի հերոսների՝ գեղեցիկ ապրելու օրինակով:

Իրենք էլ յուրօրինակ բանաստեղծներ էին. հայացքը մեզնից անարդարորեն խլված հայրենի հեռաստաններին, իրենց ներքին փոթորիկը սանձելով՝ միշտ անզիջում ու վճռական էին հայրենիքին վերաբերող իրենց որոշումներում ու գործողություններում: Եթե նրանք ապրեին ևս 25 տարի, այսօր նոր - նոր պիտի դառնային 50 տարեկան:

Երևանի պետական համալսարանի ղեկավարությունը՝ ռեկտորատը, պրոֆեսորադասախոսական կազմը, երիտասարդական կառույցները, «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբը մեծ կարևորություն են տալիս ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Նպատակային են ԵՊՀ ռեկտորի գլխավորությամբ, «Գուրգեն Մելիքյանի» Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ նրանց պարբերական ուղևորությունները դեպի ազատամարտիկների սխրագործությունների շնորհիվ ազատագրված Արցախի տարբեր վայրեր՝ Բերձոր ու Կովսական, Ստեփանակերտ ու Շուշի, Մարտունի ու Քարվաճառ:...

Եղևնուտ գյուղում՝ Պետրոս Ղևոնդյանի անունը կրող դպրոցում, նշանավորվեց այդ քաջակորով ազատամարտիկի ծննդյան 50-ամյակը, Կովսականում՝ Թաթուլ Կրպեյանի անվան դպրոցում, փառաբանվեց Հայաստանի Ազգային այդ հերոսի 50-ամյակը: Դրա շարունակությունն էր հերոսի մեծարումը Ստեփանակերտում՝ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի, ուսանող երիտասարդության և հարյուրավոր զինվորների ներկայությամբ հանդիսավոր շքեղ արարողությունը Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում:

Մարտակերտի շրջանի Ներքին Հռոջաթաղ գյուղի դպրոցում նշվեց ԵՊՀ ասպիրանտ, լրագրող - ազատամարտիկ

Նորայր Մարությանի 50-ամյակը. նրա անունով կոչվեց համալսարանականների նորոգած ու կահավորած դասարանը, դպրոցամերձ տարածքում 50 ընկուզենիների ծառատունկով հիմնվեց պուրակ:

2016 թ. օգոստոսի սկզբին ԵՊՀ «Վարդանանք» ակումբի օգոստոսյան ուխտագնացությունը և երիտասարդական կառույցների ու մեր հիմնադրամի՝ հոկտեմբերի վերջին կազմակերպած ուղևորությունը նվիրված էին Դուռման Վարդանի ծննդյան 50-ամյակին: Նրա կյանքի հիմնանպատակը պատմական արդարության վերականգնումն էր, խլված հայրենիքի ազատագրումը:

Վարդան Ստեփանյանը կամավոր մեկնել էր Աֆղանըստանի պատերազմում ռազմական մկրտություն ստանալու, որպեսզի երբ պահը գա՝ մեր հայրենիքի փորձառու և կատարյալ զինվորը դառնա: Այնտեղ էլ ստացավ իր «Դուռման» մականունը: Աֆղանստանից նա վերադարձավ Արցախի ազատագրության համար կռվելու: Եվ իսկապես էլ, վերջին տասնամյակներին հայոց ազատամարտի պատմության մեջ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանող Վարդանը լավագույններից էր իր խիզախ կենսակերպով ու ազնիվ նկարագրով: Նա մտավորական զինվորի տիպար էր, որի միակ ձգտումը պատմական հայրենիքի հանդեպ որդիական պարտքի իրագործումն էր:

Շուշին ազատագրած, տարբեր ճակատներում հերոսաբար մարտնչած քաջամարտիկը, մեծացել էր գրքերի աշխարհում, իր միտքն ու ոգին թրծել ազգապահ ու հայրենապաշտ գաղափարների հրով: Նրա ամեն քայլը եղել է գիտակցված, վաղ հասունացած հերոսի վճիռ ու գործողություն: Ապրում էր «Երանի՛ այն մարդուն, ով Մասիս սարը տուն կբերի» տեսլականով և նույնն էլ պահանջում էր բոլոր հայ երիտասարդներից. «Վայել չէ այն հայ երիտասարդներին, ովքեր գնում են Ռուսաստան, դառնում հնոցապան կամ մեխանիկ: Թուրքիան մեր դարավոր թշնամին է, ո՞վ պետք է դառնա զինվոր կամ սպա, ո՞վ պետք է կռվի», - սա՛ էր կարգախոսը, որով էլ հերոսացավ ու անմահացավ:



Ծառատունկի եռուզեղը Վարդան Ստեփանյանի (Դուռման Վարդան) անունը հավերժացնող նորաստեղծ պուրակում

Արցախ ուղևորությունն այս անգամ հետաքրքիր էր նաև նրանով, որ համալսարանականներին միացել էին Դուռման Վարդանի մայրը՝ տիկին Զարիկ Ստեփանյանը և քույրը՝ Արմինեն:

Տպավորիչ էր Արցախի Զանրապետության նախագահ պրն Բակո Սահակյանի հետ նրա նստավայրում կայացած հանդիպումը, որի ընթացքում հերոսի մեծարումն ուղեկցվեց նրա մորն ուղղված երախտագիտության ջերմ խոսքերով և Արցախի սոցիալ-տնտեսական խնդիրների և զարգացման հեռանկարների քննարկումով: Այս հանդիպումը իմաստավորված ապրելու մեծ դաս էր հատկապես ներկա գտնվող ուսանողների համար:



Ապրիլյան պատերազմում թշնամու մի ուղղաթիռ խոցած, այժմ ԵՊՀ ուսանողներ Գևորգ Մանուկյանը և ազերիական ղեկավարներն իսկապես զբաղվում են մարտնչած Գոռ Դարմանյանը ծառ տնկելիս:

Հաջորդ օրը Ստեփանյանը և Երևան մայրուղու Բերձորին հաջորդող հարմար հատվածներին մեկնում հիմնադրվեց Ֆարդան Ստեփանյանի անվան պուրակը: Ուսանողներին ծառատունկը դեկավարեցին Գ. Մելիքյանը և ԵՊՀ ուսանողներին հետադարձ ազդեցությունը խառնաքննելու տնօրեն Վահագն Վարազյանը:

Երթը մյուս հերոսներին է... .

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը տեղեկացնում է, որ հետայսու միայն վճարելու է՝ դիրքապահ գինվոր ուսանողների, երկկողմանի ծնողագուրկ ուսանողների, սիրիահայ ուսանողների, Բերձորում բնակվող ուսանողների (մասնակիորեն) ուսման վարձավճարները:

Դիմումները ընդունվում են Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկանի աշխատասենյակում բոլոր աշխատանքային օրերին մինչև 2017 թ. հունվարի 20-ը:

\*\*\*

Հիմնադրամը տեղեկացնում է, որ շարունակում է իր օգնությունը Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին՝ նրանց կով հատկացնելով ըստ երեխաների քանակի.

4 երեխա ունեցող ընտանիքներին տրամադրում է 1 կով.

6 երեխա ունեցողներին՝ 2-րդ կովը

8 և ավելի երեխա ունեցողներին՝ 3-րդ կովը:

Հայտնում ենք նաև, որ կով տրամադրվում է համապատասխան փաստաթղթեր և վարչակազմի միջնորդագիրը ներկայացնելու դեպքում:

Ցայսօր Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին տրամադրվել է 324 կով:

Հ Ի Մ Ն Ա Դ Բ Ա Մ Ի Հ Ո Գ Ա Բ Ա Բ Ձ Ո Ւ Թ Յ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Բ Դ

## Տ Խ Ր ՈՒ Ն Ի

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձուների խորհուրդը և «Բարեգործ»-ի ընթերցողները խորապես վշտացած են հիմնադրամի լավ բարեկամ, հոգաբարձության խորհրդի անդամ Ռոստոմ Թորոսյանի սիրելի տիկնոջ՝

ՀԱՍՄԻԿ ՄՈՒՐԱԴՅ ԱՆ - ԹՈՐՈՍՅ ԱՆԻ

մահվան առթիվ և ցավակցում են հանգուցյալի զավակներին ու բոլոր վշտակիր հարազատներին:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ - բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ ԱՎԱԳՅԱՆ Ա. - բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ. - բան. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ. - պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

Համարի շարվածքը, էջադրումը, ձևավորումը և լուսանկարները՝ Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն և հեռախոսահամարները՝

Երևան 0025, Արվյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:

Հեռ.՝ 060 710 629, 055 52 - 29 - 36, 010 55 - 25 - 37, 010 52 - 29 - 36: